ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Մերի Գասպարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետություն, 2026 թվականի ապրիլի 8-ից 11-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Եվրոպայի խորհուրդ

5. **Գործուղման նպատակը.**
   Ապահովել մասնակցություն ԵԽ Երեխաների իրավունքների ղեկավար կոմիտեի բյուրոյի (CDENF Bureau) 19-րդ նիստին՝ որպես բյուրոյի անդամ:

6. **Քննարկված թեմաները.**
   Լիագումար նիստում բյուրոն ուսումնասիրեց և հաստատեց CDENF-ի 13-րդ լիագումար նիստի լրամշակված օրակարգի նախագիծը: Քննարկվեց առաջիկա լիագումար նիստերի համար նախատեսվող հիբրիդային ձևաչափը, որը թույլ կտա առանձին դեպքերում ֆիզիկապես մասնակցելու անհնարինության դեպքում ապահովել առցանց մասնակցություն, սակայն միաժամանակ տեղեկացվեց, որ քարտուղարությունը հորդորելու է ներկայանալ նիստերին անձամբ՝ նիստերի արդյունավետության ապահովման նպատակով, իսկ Եվրոպայի խորհուրդը կշարունակի հոգալ մասնակցության ծախսերը:

   Քարտուղարությունը հիշեցրեց բյուրոյի անդամներին, որ CDENF-ն իր հաջորդ լիագումար նիստում պետք է ընտրի իր նախագահին և փոխնախագահին՝ 2026 թվականի հուլիսի 1-ից սկսվող առաջին ժամկետով:

   Բյուրոն ի գիտություն ընդունեց սոցիալական մեդիայի և երեխաների հոգեկան առողջության վերաբերյալ թեմատիկ երկխոսության նախապատրաստական աշխատանքները, որը կազմակերպվել է CDBIO-ի հետ համատեղ, Նախարարների կոմիտեում Մոնակոյի նախագահության հովանու ներքո: Քարտուղարությունը

բյուրոյին տեղեկացրեց, որ CDENF-ի և CDBIO-ի բոլոր անդամները, մասնակիցները և դիտորդները հրավիրված են մասնակցելու միջոցառմանը:

Բյուրոն ի գիտություն ընդունեց ընթացիկ աշխատանքների վերաբերյալ թարմացված տեղեկատվությունը Բազմամասնագիտական և միջգերատեսչական ծառայությունների միջոցով երեխաների համար բարենպաստ արդարադատության հասանելիության փորձագետների կոմիտեի՝ (ENF-JUS) «Երեխաներին հարմարեցված արդարադատության համար բազմամասնագիտական և միջգերատեսչական ծառայությունների վերաբերյալ առաջարկությունների նախագծի», գործառնական ուղեցույցների և ENF-JUS-ի հաջորդ հանդիպման նախապատրաստման վերաբերյալ:

Բյուրոյի անդամ, Բռնության կանխարգելման փորձագետների կոմիտեի (ENF-VAE) նախագահ Մարյո Մայյան (Ֆինլանդիա) տեղեկացրեց բյուրոյին, որ ENF-VAE-ն հաստատել է «Տարիքին համապատասխան համապարփակ սեռական կրթության վերաբերյալ» հանձնարարական – առաջարկի նախագիծը, որը ներկայացվելու է CDENF-ի հաստատմանը՝ 2026 թվականի հունիսի 2-4-ը կայանալիք 13-րդ լիագումար նիստի ընթացքում:

Բյուրոն ի գիտություն ընդունեց քարտուղարության տրամադրած տեղեկատվությունը «Երեխաներին հարմարեցված արդարադատության ուղեցույցների թեմատիկ վերանայման մասին զեկույցի» («Բացթողումների վերլուծություն») ընթացքի վերաբերյալ: Քարտուղարությունը նաև թարմացում ներկայացրեց անդամ պետություններին ուղղված՝ «Ծնողների բաժանման և խնամքի գործընթացներում երեխայի իրավունքների և լավագույն շահերի պաշտպանության վերաբերյալ» Նախարարների կոմիտեի առաջարկությունների՝ երեխաների համար նախատեսված տարբերակի շուրջ աշխատանքների վերաբերյալ: Դրանք պետք է պատրաստ լինեն և մեկնարկեն CDENF-ի 14-րդ լիագումար նիստում՝ 2026 թվականի նոյեմբերին:

Բյուրոն ի գիտություն ընդունեց Արհեստական բանականության և թվային թեմաներով երեխայի իրավունքների վրա ազդեցության գնահատման գործիքի (CRIA) վիճակի վերաբերյալ քարտուղարության կողմից համառոտ թարմացումը:

Քարտուղարությունը հիշեցրեց, որ նախատեսվում է մշակել Երեխաների իրավունքների հաջորդ՝ 2028-2033 թթ. ռազմավարությունը, որի ուղղությունների կանխորոշման նպատակով կկազմակերպվի գաղափարների հավաքագրում CDENF-ի հաջորդ լիագումար նիստի ժամանակ՝ 2026 թվականի հունիսին: Բյուրոն կարծիքներ փոխանակեց հարցաթերթիկի վերաբերյալ, որը պետք է շրջանառվի:

Քարտուղարությունը Բյուրոյին տեղեկացրեց Եվրոպայի խորհրդի աշխատանքներում CDENF-ի տարբեր անդամների ներկայացվածության մասին: Նշվեց, որ սեռական կողմնորոշման, գենդերի հարցերով փորձագետների կոմիտեի (ADISOGIESC) և

շրջակա միջավայրի հարցերով ղեկավար կոմիտեի (CDENV) համար կնշանակվեն համակարգողներ:

Նշանակվեց բյուրոյի հաջորդ նիստերի նախնական ժամանակցույցը և անցկացման վայրը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Որպես բյուրոյի նոր անդամ, շնորհակալություն եմ հայտնել Եվրոպայի խորհրդի Երեխաների իրավունքների ղեկավար կոմիտեին և քարտուղարությանը բյուրոյի կազմում ինձ ընդգրկելու հնարավորության համար:

Կարևորել եմ բյուրոյի դերը Երեխաների իրավունքների ղեկավար կոմիտեի նիստերի միջև շարունակականության և ռազմավարական ուղղորդման ապահովման գործում՝ Երեխաների իրավունքների 2022–2027 թթ. ռազմավարության իրականացման նպատակով, ինչպես նաև բյուրոյի առաջնահերթությունների հստակ և համակարգված մոտեցումը առաջիկա նիստերի նախապատրաստման և ընթացիկ աշխատանքների գնահատման գործընթացում:

Կարևորել եմ նաև հետագա աշխատանքները, այդ թվում՝ 2028–2033 թթ. նոր ռազմավարության նախապատրաստումը՝ նոր մարտահրավերներն ու ձեռք բերված փորձը հաշվի առնելով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.
Որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.
Առաջարկություններ չկան:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Մերի Գասպարյան
14.04.2026